## Համաձայնագիր

**ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի**
**Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի**
**Աշտարակ-2, 0203, ՀՀ**
**(այսուհետ՝ «ՖՀԻ»)**
**և**
**Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Սիբիրյան բաժանմունքի Լազերային ֆիզիկայի ինստիտուտ ԴՊԲԿ-ի**
**15Բ ակ.Լավրենտյևի պող., Նովոսիբիրսկ, 630090, ՌԴ**
**(այսուհետ՝ «ԼՖԻ»)**
**միջև**

13 հոկտեմբերի 2017թ.

Քանի որ երկու կողմերը, ՖՀԻ-ն ու ԼՖԻ-ն, ավանդաբար իրականացնում են գիտական հետազոտություններ լազերային սպեկտրասկոպիայի և քվանտային մետրոլոգիայի բնագավառում, կողմերը եկել են նշված ոլորտներում գիտական համագործակցության մեկնարկման համաձայնության, ներառելով հետևյալ ձևերը՝ գիտական տեղեկատվության փոխանակում, համատեղ էքսպերիմենտների իրականացում, գիտական այցելությունների փոխանակում, գիտնականների վերապատրաստում մյուս կողմի լաբորատորիաներում, համատեղ հետազոտությունների ֆինանսավորման հայտերի ներկայացում Ռուսաստանում և Հայաստանում, համագործակցության ընթացքում ստացված արդյունքների համատեղ հրապարակում:

Մասնավորապես, կողմերը պայմանավորվել են համագործակցել հետևյալ հետազոտությունների ուղղություններով. ալկալի մետաղների գոլորշիներում բնակեցումների կոհերենտ գերում, հագեցված կլանման ռեզոնանսներ, նոսր գոլորշիներում մագնիսաօպտիկական երևույթներ, ինչպես նաև այլ ոչ գծային օպտիկական երևույթներ՝ լազերային ֆիզիկայում, քվանտային ինֆորմատիկայում, օպտիկական հեռահաղորդակցությունում, ինովացիոն լազերային տեխնոլոգիաներում և քվանտային մետրոլոգիայում կիրառման նպատակով:

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետն է երեք տարի: Համաձայնագիրը կարող է երկարացվել երկու կողմերի գրավոր ստորագրված երկարաձգման մասին հռչակագրերի հիման վրա:

Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով: Երկու լեզուներով տեքստերը նույնական են և ունեն հավասար կարգավիճակ: Այս կամ այն բառերի և կապակցությունների վերաբերյալ վեճերի ծագման դեպքում որոշիչ նշանակություն է ունենալու Համաձայնագրի ռուսերեն տեքստը:

Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրին վերաբերվող այլ փաստաթղթերը ունեն իրավաբանական ուժ, եթե դրանք պատշաճ կերպով ստորագրված են և ստացված ֆաքսիմիլ կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ
ГНКО Институт физических исследований Национальной академии наук Республики Армения

Ամսաթիվ. 13.10.2017
Дата

Ստորագրություն
Подпись

ԱԱՀ. Արամ Վ. Պապոյան
Имя: Арам В. Папоян

Պաշտոն. ՖՀԻ տնօրեն
Должность: Директор ИФИ

## Соглашение

**Между**
**Институтом физических исследований**
**Национальной академии наук Республики Армения**
**0203, Аштарак-2, Армения**
**(далее именуемым «ИФИ»)**
**и**
**Федеральным государственным бюджетным учреждением науки Институт лазерной физики Сибирского отделения Российской академии наук,**
**630090, Новосибирск, пр. Ак. Лаврентьева, 15Б,**
**Россия (далее именуемым «ИЛФ»)**

«13» октября 2017 г.

Поскольку две стороны, ИФИ и ИЛФ, традиционно проводят научные исследования в области лазерной спектроскопии и квантовой метрологии, стороны достигли соглашения о начале научного сотрудничества в вышеуказанных областях в форме обмена научной информацией, постановки совместных научных экспериментов, обмена визитами ученых, проведения стажировок ученых в лабораториях другой стороны, подачи заявок на финансирование совместных исследований в России и Армении, и совместных публикаций результатов, полученных в ходе сотрудничества.

А именно, стороны договорились о сотрудничестве в области изучения явления когерентного пленения населенностей в парах щелочных металлов, резонансов насыщенного поглощения, магнито-оптических эффектов в разреженных газах, а также других нелинейно-оптических эффектов с целью их применения в лазерной физике, квантовой информатике, оптических коммуникациях, инновационных лазерных технологиях и квантовой метрологии.

Срок действия данного Соглашения – три года. Соглашение может быть продлено на основании письменной декларации о продлении, подписанной обеими сторонами.

Данное Соглашение составлено на армянском и русском языках. Тексты обоих языков идентичны и имеют равный статус. При возникновении споров по поводу значения тех или иных слов и выражений, решающее значение будет иметь текст Соглашения на русском языке.

Настоящее Соглашение и другие документы, касающиеся Соглашения, также имеют юридическую силу, если они надлежащим образом подписаны и получены с помощью факсимильной связи или электронной почты.

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Սիբիրյան բաժանմունքի Լազերային ֆիզիկայի ինստիտուտ ԴՊԲԿ
Федеральное государственное бюджетное учреждение науки Институт лазерной физики Сибирского отделения Российской академии наук

Ամսաթիվ. 13.10.2017
Дата

Ստորագրություն
Подпись

ԱԱՀ. Ալեկսեյ Վ. Տայչենաչև
Имя: Алексей В. Тайченачев

Պաշտոն. ԼՖԻ տնօրեն
Должность: Директор ИЛФ